

Եսայեայ 7:14 (Isaiah 7:14)

«Էմմանուէլ»

Վեր. Ստեփան Մնջերեան

Հայ Աւետարանական Գողգոթա Եկեղեցի 01.06.02

Այս առաւօտ համար մը պիտի կարդամ որ բոլորիդ ծանօթ է. շատ կարելոր համար մըն է, Եսայեայ 7:14, *«Անոր համար Տէրը նշան պիտի տայ քեզի. Ահա կոյսը պիտի յղանայ ու որդի պիտի ծնանի. Եւ անոր անունը Էմմանուէլ պիտի կոչուի»*:

741 թուին Քրիստոսէ Առաջ (Ք.Ա.) այս մարգարէութեան ատեն, Աֆազ Յուդայի թագաւորն էր: Անրգգամ թագաւոր մըն էր եւ Աստուծոյ չէր հաւատար: Երբ իր երկիրը թշնամիներու յարձակումի տակ էր, ինք տանադին արծաթն ու ոսկին տուաւ Ասորեստանի թագաւորին որ իր երկիրը պաշտպանէ եւ Աստուծոյ չվստահեցաւ:

Աստուած Եսայեայ մարգարէին միջոցով խօսեցաւ այս անհաւատ թագաւորին ըսելով, *«Ահա կոյսը պիտի յղանայ եւ որդի մը պիտի ծնանի եւ անունը պիտի կոչուի Էմմանուէլ»*: Հոս կը տեսնենք թէ Աստուած կը տիրէ Աֆազի եւ Յուդայի վրայ նաեւ Ասորեստանի վրայ: Աստուած կը տիրէ բոլոր մարդկային պատմութեան վրայ:

750 տարիներ ետք կը տեսնենք Գաբրիէլ հրեշտակը կուգայ կոյս Մարիամի որ նշանուած էր Յովսէփի եւ կըսէ, *«Աստուծմէ շնորհի՛ գտար, պիտի յղանաս եւ որդի մը պիտի ծնանիս եւ անոր անունը Յիսուս պիտի դնես՝ Անիկա մեծ պիտի ըլլայ եւ բարձրելոյն Որդին պիտի ըսուի»* - Աստուծոյ Որդին - Աստուած մեր մէջ - Էմմանուէլ:

Այս մարգարէութեան իրականացումը ինչ կը նշանակէ մեզի այս առաւօտ: Հետեւեալ երկու խորհուրդները նկատի առնենք:

Առաջին - Աստուած մեր մէջ: Յիսուս մեր Էմմանուէլն է:

Աստուած ընտրեց Յիսուս որպէս փրկիչ աշխարհի սկիզբէն առաջ. Աստուած ծրագրած էր Յիսուսի գալուստը Ադամէն առաջ. Ան որոշած էր որ Մարիամ պիտի ըլլար կոյսը որ Յիսուսը ծնանէր: Աստուած մեզ ալ ի մտի ունի նոյն ձեւով:

Պօղոս առաքեալ կը'սէ Եփեսացիս 1:4ի մէջ, «Աստուած մեզ Անով - Յիսուսով - աշխարհի սկիզբէն առաջ ընտրեց, որպէսզի մենք սուրբ ու անարատ ըլլանք իր առջեւ սիրով»: Աստուած որոշած է մեզի մօտենալու:

Աստուած կուզէ որ մենք փրկուինք Յիսուս Քրիստոսի միջոցով: Ան գիտէ մեր խորունկ պէտքերը եւ կուզէ Իր շնորհով մեր սրտերուն մէջ գործել: Ան կը փափաքի որ մեր կեանքերը փոխուին եւ կարենանք պտղաբեր կեանք ունենալ մեր տան մէջ, մեր շրջակայքին մէջ նաեւ մեր եկեղեցիին մէջ: Աստուած կուզէ որ ազատ ըլլանք մեղքէ եւ ունենանք յոյս եւ նպատակ մեր կեանքին մէջ եւ ապա յաւիտեան ապրինք Իր հետ:

Երկրորդ խորհուրդ - Որոշումը մերն է. Թոյլ պիտի տա՞նք Աստուծոյ որ մեր մէջ ներգործէ:

Մարիամ պէտք է որոշում տար: Գաբրիէլ հրեշտակը կը'սէ իրեն պիտի յղանաս. տակաւին կատարուած չէ խօսքը: Որով Մարիամ կը հարցնէ, «Ինչպէ՞ս պիտի ըլլայ այս բանը, որովհետեւ ես այր մարդ չեմ գիտեր»:

Գաբրիէլ հրեշտակը կ'ըսէ իրեն, «Սուրբ հոգին պիտի գայ քեզի ու բարձրեալին զօրութիւնը քու վրայ հովանի պիտի ըլլայ»: Ուրեմն Աստուած պիտի ընէ այս, բայց դուն պէտք է որ Իրեն թոյլ տաս:

Այդ օրերուն պոռնիկները կը ֆարկոճէին: Մարիամ կը լսէ թէ յղի պիտի մնայ, հակառակ որ ամուսնացած չէ: Արդիօք ինչպէ՞ս կրցաւ հաշտուիլ այս պատգամին հետ: Արդեօք վախ պատե՞ց զինք. ինչպէ՞ս պիտի կրնար բացատրել այս պատգամը Յովսէփին եւ իր ընտանիքին:

Մարիամ ըսաւ, «Ահա ես Տէրոջը աղախինն եմ. քու ըսածիդ պէս թող ըլլայ ինձի»: (Ղուկաս 1:31,34,35,38)

Այսօր կրնանք նայիլ Մարիամի ու ըսել, «Ես Մարիամ չեմ. իր հաւատքը չունիմ. Աստուած չի կրնար զիս գործածել»:

Այո, Մարիամ եղաւ Յիսուսի մայրը: Բայց յիշենք որ Մարիամ պարզ անձ մըն էր, մեզի նման պարզ էակ մը, մեղաւոր եւ կարօտ Յիսուսի փրկութեան:

Ա.բազ թագաւորը գիտեր Աստուծոյ մասին: Եսայեայ մարգարէն իրեն կուտար Աստուծոյ խօսքը: Բայց Ա.բազ վստահեցաւ Աստուծոյ թագաւորին եւ իր բանակին: Միւս կողմէն կը տեսնենք Մարիամ որ իմացաւ Աստուծոյ խօսքը՝ վստահեցաւ անոր եւ հրաշքը կատարուեցաւ:

Այսօր կը լսենք՝ կոյսը պիտի յղանայ եւ գետենք արդիւնքը - Էմմանուէլ - Աստուած մեր մէջ: Մենք պէտք է թոյլ տանք որ Աստուած գործէ մեր կեանքերէն ներս: Արդիօք պիտի վստահի՞նք Աստուծոյ. Մեր անձը պիտի նուիրե՞նք Իրեն, որ գործէ մեր մէջ:

Ինքզինքդ Աստուծոյ յանձնէ՛, վստահէ՛ Իրեն, Ան հրաշքներ պիտի գործէ քու կեանքիդ մէջ: